

ՀՏԴ : 929:75(479.25)Հովսեփյան+891.981-13  
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-123

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿԵՐՊԱՐԾ ԱՐՏԱՇԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

### ՆԱՐԵ ՆԱԴԱՐՅԱՆ\*

Հավատարիմ մնալով հոդվածի խորագրին՝ ներկայացրել ենք քանդակագործ, <<Ժողովրդական նկարիչ Արտաշես Հովսեփյանի (1931-2017) այն աշխատանքները, որոնք նվիրված են ազգային էպոսին և հատկապես Սասունցի Դավթի կերպարին: Հարթաքանդակները (տուֆ, 1981) գտնվում են Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի ստորգետնյա ճեմարահում և Գաֆեսճյան արվեստի կենտրոնում:

**Բանալի բառեր՝** Արտաշես Հովսեփյան, քանդակագործ, ազգային էպոս, Սասունցի Դավիթ, հարթաքանդակներ, կայարան, Գաֆեսճյան:

### Ներածություն

Ինչպես գիտենք, «Սասունցի Դավիթ» էպոսը բաղկացած է չորս հիմնական ճյուղերից՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Միեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Միեր»: Վկանական դյուցազններից ամենաճանաչված և սիրված կերպարը Սասունցի Դավիթն է:

Գրառման տարիներից ի վեր «Սասնա ծոերի» համարյա բոլոր հետազոտողները մի հատուկ շեշտ են դնում երրորդ ճյուղի վրա՝ համարելով այն ամբողջ դյուցազներգության հիմնական ու կարևոր մասը<sup>1</sup>: Համապատասխանաբար Դավիթը դիտվում է իրեն էպոսի կենտրոնական հերոս, և նրա անձնավորած գաղափարաբանությունը՝ առանցքային: Մեծ մասամբ նույն վերաբերմունքն են Երևակայում գրողներն ու արվեստագետները՝ մշակելու համար վերցնելով և առանձնակի ընդգծելով հենց Դավթի պատումը<sup>2</sup>:

\* Հյանաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու, nare-nadaryan@mail.ru, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

<sup>1</sup> Բաղդասարյան Ա., «Սասունցի Դավիթ» էպոսի և նրա գրական մշակումների նկարագրումները, Երևան, 2012, էջ 8:

<sup>2</sup> Մաթևոսյան Վ., Հակոբ Կոջոյան, Երևան, 1971, էջ 65:

Դավթի կերպարին են անդրադարձել հայ արվեստագետներից շատերը կերպարվեսոի տարբեր տեսակներում ու ժանրերում: Նրան նվիրված բազմաթիվ գրաֆիկական աշխատանքների, կտավների և քանդակների հետ մեր հանդիսականն առիթ է ունեցել ծանոթանալու հատկապես 1939-ից սկսած<sup>3</sup>, քանի որ այդ թվականին մեծ շուրջով նշվում էր «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական դյուցազնավեպի ստեղծման հազարամյա հորելյանը: 60 պատումների հիման վրա կազմվել էր միասնական, համահավաք բնագիր (հեղինակներ՝ Մանուկ Արենյան, Գևորգ Աբովյ, Արամ Ղանալանյան), որն ամբողջական և հստակ պատկերացում էր տալիս Էպոսի մասին: Իրադարձությունը նշելու համար կազմակերպվել էին կառավարական կոմիտեներ միութենական մասշտաբով: Պարբերական մամուլում լրս էին տեսնում բազմաթիվ հոդվածաշարեր, որոնք ծանոթացնում էին լայն հանրությանը հայկական էպոսին, նրա ստեղծման իրական պատմական փաստերին, բովանդակությանը, գուգահեռաբար հնարավորություն էին ստեղծում այդ նյութերում տեղադրելու դյուցազնավեպի տարբեր դրվագներ պատկերող բազմաթիվ գրաֆիկական թերթեր, կազմակերպվում էին նաև ցուցահանդեսներ: Առավել հայտնի են Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» արձանը, Էդվարդ Խարելյանի էպոսյան նկարաշարերը, Երվանդ Քոչարի և Հակոբ Կոջոյանի աշխատանքների հիման վրա ստեղծված «Սասուն ծուեր» էպոսի հրատարակությունների պատկերազարդումները և այլն: Էպոսի թեման արտացոլվել ու այսօր էլ արդիական է պետական խորհրդանշներում հատկապես դրամներին:

Հասկանալի է, որ մեկ հոդվածում հնարավոր չէ լիարժեք և հանգամանորեն ներկայացնել «Սասունցի Դավիթ» էպոսին նվիրված նկարազարդումները, կտավները, քանդակները: Ուստի, հավատարիմ մնալով հոդվածի խորագրին, կներկայացնենք միայն քանդակագործ,

<sup>3</sup> Մինչև 1939-ին անդրադառնալը նշենք, որ մինչ այդ էպոսի նկարազարդումները սակավ էին: Բացի 1922-ի գրաֆիկական թերթից, Հ. Կոջոյանը 1936-ին ծնավորեց «Սասուն ծուեր» ժողովրդական էպոսի պատումների առաջին հատորի սուպերշապիկը, կազմը, ֆորզացը, ֆրոնտիստիկը և անվանաթերթը: Հանգամանորեն տե՛ս Քաղդասարյան Ա., «Սասունցի Դավիթ» էպոսի և նրա գրական մշակումների նկարազարդումները, էջ 19:

ՀՀ ժողովողական նկարիչ Արտաշես Հովսեփյանի (1931-2017) այն աշխատանքները, որոնք նվիրված են ազգային էպոսին և հատկապես Սասունցի Դավթի կերպարին:

### **Հիմնական նյութի շարադրան**

Հարթաքանդակները (տուֆ, 1981) գտնվում են Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավթ» կայարանի ստորգետնյա ճեմասրահում՝ կառամատուցից դեպի շարժասանդուռը տանող ճանապարհին:

Ազգային դյուցազնավեպի թեմաներով կատարված «Զոջ Միեր», «Մանուկ Դավթ» ու Քուուկիկ Զալալին», «Դավթը՝ հովիվ», «Փոքր Միեր» հարթաքանդակներն ուշադրություն են գրավում կոմպոզիցիոն միասնական, դեկորատիվ-ռիթմիկ պարզ դասավորությամբ և մոնումենտալ-ոճավոր սիմվոլիկ ձևերով<sup>4</sup>:

Շարժասանդուռով իջնելիս առաջին կերպարը, որ երևում է, վիպական-առասպելական հերոս Զոջ Միերն է: Միերը հայ բանահյուսության և գրականության մեջ, արվեստում ըմբռու մաքառումների, ազգային ու սոցիալական փրկության երազանքը մարմնավորողի կերպար է: Միերը պատրում է Սասուն տանող հացի ճանապարհը փակող մի մարդակեր առյուծի երախ: Այդ քայլից հետո նրան սասունցիները տվել են «Աղյուծակ Միեր» կամ «Աղյուծ Միեր» պատվանունը: Կերպարին հավատարիմ մնալով՝ Արտաշես Հովսեփյանը ներկայացրել է զայրացած Զոջ Միերին առյուծի հետ: Միերի ձեռքերը դեպի երկինք են պարզված, իսկ ձեռքերից դուրս եկող ճառագայթները կարծես շեշտում են քանդակագործի ասելիք բանալին. Միերն ունի ուժեղ, ճառագայթների մեջ առնված կարող ձեռքեր, որ իրագործում է գլխում հղացվածը: Արտաշես Հովսեփյանի աշխատանքում էպոսի հերոսը, կարծես, կանգնած է հնարավորի ու անհնարի սահմանագծում: Դրանով է պայմանավորված նրա հերոս լինելը, քանի որ հերոսը նա է, ով կարողանում է անել այն, ինչը չի կարող ուրիշ ոչ: Նրա գործողություններն անչափ կարևոր են, վճռական, ինչը շատ լավ արտացոլված է այս հարթաքանդակում: Հովսեփյանը պատկերել է ոչ թե անցորդին նայող, այլ հայացքը ցած՝ դեպի առյուծն ուղղված կերպար: Վարպետորեն քանդակելով Միերի առնական մարմնակազ-

<sup>4</sup> Աղասյան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 201:

մությունը՝ քանդակագործը ստեղծել է լուսաստվերների և հարթությունների հմուտ հարաբերություն, ինչը կարևոր նշանակություն ունի բարձրաքանդակը հեռվից դիտելու ժամանակ:

Հետաքրքիր է ներկայացված «Մանուկ Դավիթ» ու Քուոկիկ Զալյալին»: Վերջինս հայոց հավատալիքներում լճերի մեջ ապրող առապելական կենդանակերպ էակներ են, որոնք հաճախ դուրս են գալիս ջրից և նոյն տեսակի այլ կենդանիների հետ խաչասերվում: Դրանցից ծնվում են ճեփի-ճերմակ անթիծ մտրուկներ<sup>5</sup>: Հրեղեն ծիերը ջրից դուրս են գալիս՝ կայծակնային արագությամբ հերոսին տեղափոխելով մի վայրից մյուսը, հասցնելով երկինք ու արևին: Հայ վիպական ավանդության մեջ հրեղեն է Քուոկիկ Զալյալին, որին «Սասնա ծոերի» ծովածին Սանասարը ձեռք է բերում ծովից<sup>6</sup>:

**Բարձրաքանդակի կառուցվածքում,** եթք ուսումնասիրում ենք առանձին մանրամասնությունները, ակնհայտ երևում են քանդակագործի մասնագիտական վարպետությունը և էպոսի իմացությունը. պատկերված Քուոկիկ Զալյալու մազերից ամուր կառչած է անբաժան փոքրիկ Դավիթը: Մանկիկը, կարծես, ծովված է ձիու մազերին, և ուշադիր դիտելու դեպքում նկատվում է, որ խորքից գալիս է դուրս՝ դեպի դիտողը՝ ասես բարձրաքանդակից դուրս գալով դիտողին ընդառաջ, հրավիրում է վերջինիս հաղորդակից դառնալու իրենց արկածներին: Քուոկիկ Զալյալին նախատեսված է Դավթի համար՝ որպես նրա անփոխարինելի օգնական կենդանի, և հանձին նրա՝ ինքն է ճանաչում իր տիրոջը, կապված է համակրական կապով: Հորինվածքում ձին սլանում է քամուն հանդիման. Քուոկիկ Զալյալու պոչի զարդաքանդակային ոլորագծերի վրա ազդում է քամուն դիմադրող սրբնթաց վազքը: Քուոկիկ Զալյալին այնքան տարերային է պատկերված, որ թվում է, թե ճախրանքի մեջ է:

Ծարժասանդուդքով իջնելիս աջ կողմում պատկերված է ուժեղ, գեղեցիկ պատանի Դավիթը՝ հովվի տեսքով: Ըստ Էպոսի՝ Ձենով Օհանը կնոջ բողոքներից հետո Դավիթին դարձեց հովիվ, իսկ մարդկանց բողոքներից հետո՝ նախրապան: Դավթի ուսերին հովվական փայտն է, հետնամասում՝ կլոր զարդանախշ, որը կարծես առանձնացնում, առաջ

<sup>5</sup> Աքեղյան Մ., Երկեր, հ. Է, Երևան. 1975, էջ 83:

<sup>6</sup> «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 9:

Է բերում Դավթին և ընդգծում նրա մարմնեղ կերպարը: Դավիթը գոհ է իր կատարած աշխատանքից. փակ աչքերը և ինքնավստահ կեցվածքն այդ ամենի վառ արտահայտումն են: Ի դեպ, զարդանախչի մեջ և ոտքերի տակ պատկերված են կենդանիներ, որոնք ամբողջացնում և շեշտում են Դավթի հովիկ լինելը: Առանցքային նշանակություն ունի զարդանախչային հորինվածքով գոտու պատկերումը Դավթի կերպարում: Բարդ զարդանախչային հորինվածքով գոտիները հիմնականում կրել են հասարակության մեջ ազդեցիկ դիրքով մարդիկ, ուզմի առաջնորդները: Գոտին համարվել է քաջության խորհրդանիշ, որը գալիս է նրա նախնական պաշտպանական նշանակությունից: Այս ամենը քաջ հայտնի էր Արտաշես Հովսեփյանին. դրանով է պայմանավորված հովիկ Դավթի և Մեծ Մհերի կերպարներում ընդգծված գոտիների առկայությունը:

«Սասունցի Դավթ» կայարանի կենտրոնական կերպարներից է «Փոքր Մհեր» աշխատանքը: Փոքր Մհերը «Սասնա ծոեր» էպոսի հերոսական սերնդի վերջին ներկայացուցիչն է, թերևս, հայկական էպոսի ամենաառեղծվածային կերպարներից մեկը: Ի տարբերություն էպոսի մյուս դյուցազունների՝ նրան բոլորովին այլ ճակատագիր է բաժին հասել: Դավթի մահից հետո հորը փոխարինած Փոքր Մհերը պատերազմում է թշնամիների դեմ և հաղթում: Բայց կատարվում է հոր անեծքը. Մհերը մնում է անժառանգ: Հայրենի հողը չափազանց թույլ ու փիսրուն է դառնում Մհերի ու նրա ծիռ ոտքերի տակ: Սասնա վերջին քաջազունը փակվում է Ազրավաքար ժայռի մեջ իր հավատարիմ ընկերոց՝ հրեղեն Քուուկիկ Զալալու հետ: Արտաշես Հովսեփյանը ներկայացրել է քարի մեջ քարացած Մհերին՝ պատկերված մահնում պառկած, իսկ ծախս կողմում Քուուկիկ Զալալին է: Փոքր Մհերի կյանքը ներթափանցված է ողբերգականությամբ: Քանդակագործը ներկայացրել է կյանքի արհավիրքներին դիմակայած ազգի վերջին դյուցազունին, ով համակերպվել և հնազանդվել է իր դժխտմ ճակատագրին՝ ներսում կրելով այդ խռովքը և փակվելով Ազրավաքարում՝ նա լիովին օտարված է, արտաքին աշխարհը դադարել է գոյություն ունենալ նրա համար: Վարպետորեն է ներկայացված Մհերի լուր բողոքը. նա ընդկում է աշխարհակարգի դեմ, ավելին, այդ ընդկման հիմքում միայն բողոքը չէ, նրանում կա նաև սպասում, նա դեռ անելիք ունի: Մհերը

Քուոկիկ Զալալու և Թուր Կեծակիի հետ միասին հորիզոնական դիրքով, կամարի մեջ առնված, զարդանախշ ծածկոցով ծածկված սպասում է իր ժամին, դեկորատիվ միջավայրում՝ շրջապատված հասկերով, հավերժության նշանով։ Փոքր Միերի կերպարում ուշագրավ է նաև լուսապատճեն՝ լուսային ճառագայթներից կազմված թագի առկայությունը։ Վերջինս օգտագործելու է տարբեր կրոնների սրբապատճերագրության մեջ՝ սրբերի կերպարներ պատկերելու համար, և որոշակի ժամանակաշրջանում եղել նաև դեկավարների կամ հերոսների պատկերման ձևը։ Այստեղ մանրակրկիտ մշակված են բոլոր դետայները՝ նախշերը, բոյսերը։ Ոճավորված կամարը կարծես իր հովանու տակ է վերցրել հերոսներին։ Արտաշես Հովսեփյանը ներկայացնում է մարդկային դրամա, որի կրողը Փոքր Միերն է։

Ազգային էպոսի թեման միշտ էլ հատուկ հետաքրքրություն է ներկայացրել քանդակագործի համար։ Դրա վառ ապացույցն է նաև Գաֆեսճյան արվեստի կենտրոնի «Սասունցի Դավիթ» սրահի քազմաֆիգուր ծավալուն ստեղծագործությունը։ Քանդակագործը, պահպանելով Հակոբ Կոդոյանի ընտրած սյուժեները, ստեղծում է «Սասունցի Դավիթ» հարթաքանդակը։ Քանդակագործի խոսքով՝ 1980-ականներին, երբ Կասկադը դեռ կառուցման վոլով էր, ճարտարապետ Ջիմ Ռորոյանը համայիրի սրահներից մեկը ձևավորելու առաջարկով դիմել է իրեն, և արվեստագետը չորս տարի շարունակ աշխատել է այն սրահում, որն այսօր կրում է «Սասունցի Դավիթ» անունը<sup>7</sup>։ 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժի, Խորհրդային Միության փլուզումից հետո տուֆակերտ որմնաքանդակն անավարտ է մնացել։ Եվ միայն 2016 թվականի մայիսի 21-ին՝ թանգարանային գիշեր ամենամյա միջոցառման շրջանակներում հանրության դատին է հանձնվում Սասունցի Դավիթ որմնաքանդակը։ Արտաշես Հովսեփյանն աշխատել է ազգային էպոսին վերաբերող խոշորածավալ ուղիեժի վրա՝ խնդիր ունենալով Հ. Կոջոյանի «Սասունցի Դավիթ» (Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածու, 1922, 47x59սմ) ջրանկարը մոտ 15 անգամ գերազանցող որմնաքանդակի

<sup>7</sup> Գաֆեսճյանում բացվեց Արտաշես Հովսեփյանի «Սասունցի Դավիթ» որմնաքանդակը, <https://armenpress.am/arm/news/847715/gafestcheanum-bacvecartashes-hovsepyni-sasunci-davit.html>, 18.05.2016.

Վերածել: Էպոսի 36 դրվագ-պատկերներն ամփոփված են մեկ ընդհանուր կոմպոզիցիայի մեջ: Կենտրոնում ազգային էպոսի գլխավոր հերոսն է՝ Դավիթը՝ Քուովիկ Զալալիի վրա, Թուր Կեծակին ձեռքին՝ սրընթաց գրոհի ժամանակ: Այդ դրվագը շրջանակող մանր հատվածների մեջ հայոց դյուցազնի կյանքը լուսաբանող պատկերներ են՝ Սասունցի Դավթի ծնունդը, առաջին որսը, գառնարածությունը, Մսրա Մելիքի հետ պայքարի պատկերներ (յուրաքանչյուր պատկեր ուղեկցված է էպոսից համապատասխան մեջբերումով): Հորինվածքը եզրագծող երկրորդ շարքում զարդարություններ են, բնապատկերներ, ամրոցի պարիսաներ, Մարութա վանքը և այլն:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, <<ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը, անդրադառնալով Գաֆեսճյան արվեստի կենտրոնի «Սասունցի Դավիթ» սրահի ստեղծագործությանը, նշում է, որ Արտաշես Հովսեփյանը հանդես է եկել ոչ թե սուկ պասիվ նմանակողի, «թարգմանչի» դերում, այլ փորձ է արել գեղարվեստական արտահայտության նոր միջոցներով, քանդակի լեզվով ցոյց տալ, վեր հանել Հակոբ Կոջոյանի նկարում թաքնված կոթողային ուժը<sup>8</sup>:

Այս աշխատանքում ելակետային է վիպերգական նյութի բունքանական-դյուցազնական կողմը: Հովսեփյանին հաջողվել է Հակոբ Կոջոյանի հեղինակած փոքրածավալ ջրաներկ ստեղծագործությունը<sup>9</sup> փոխանցել տուֆի մեջ մոնումենտալ հնչեղությամբ:

### Եզրակացություն

<sup>8</sup> Աղասյան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 201:

<sup>9</sup> Արվեստագիտության թեկնածու Վիլիելմ Մաթևոսյանը, խոսելով Հ. Կոջոյանի «Սասունցի Դավիթ» աշխատանքի մասին, գրել է. «Կոջոյանն առաջինն էր, որ իր «Սասունցի Դավիթ» կերտելիս ելակետ ընդունեց վիպերգական նյութի բունքանական-դյուցազնական կողմը՝ միաժամանակ արտացոլով դրա պատմական, կենցաղային ու դրամատիկական հոգերանական մոտիվները: Այդ հավատամքը որդեգրելիս Կոջոյանը ևս ընտրեց դյուցազնավեպի երրորդ ճյուղը: Երեսունից ավելի ինքնուրույն դրվագներ ամփոփելով մեկ ընդհանուր կոմպոզիցիայի մեջ՝ նա ստեղծեց չափով ու կատարման տեխնիկայով գրաֆիկական, բայց մտահղացման մասշտաբով «մոնումենտալ-դրմաննակարային» մի պատկեր»:Տե՛ս Մաթևոսյան Վ., Հակոբ Կոջոյան, Երևան, 1971, էջ 223:

Այսպիսով, Էպոսի կերպարների ըննությունն անսահման հնարավորություններ է ընձեռում ազգային հոգեկերտվածքի ուսումնասիրման տեսանկյունից: Արտաշես Հովսեփյանը, դառնալով այդ ուսումնասիրողներից մեկը, իր աշխատանքներում պահպանել է կերպարների անմիջական ներազդումը, շեշտել դրանց ամենահական հատկանիշները՝ կերպավորելով համապատասխան նյութի և ձևի մեջ:

## ОБРАЗ ДАВИДА САСУНСКОГО В ИСКУССТВЕ АРТАШЕСА ОВСЕПЯНА

НАРЕ НАДАРЯН

Придерживаясь названия статьи, мы представили работы скульптора, Народного художника РА Арташеса Овсепяна (1931-2017), посвященные армянскому национальному эпосу «Давид Сасунский» и, в частности, центральной фигуре Давида Сасунского. Барельефы с изображением героя находятся в подземном фойе станции "Давид Сасунский" Ереванского метрополитена (туф, 1981 г.) и в Центре искусств Гафесчяна.

**Ключевые слова-** Арташес Овсепян, скульптор, народный эпос, Давид Сасунский, барельефы, станция, Гафесчян.

## SASUNTSI DAVIT IN ARTASHES HOVSEPYAN'S ART

NARE NADARYAN

In line with the title of the article, we present the works of the sculptor, People's Artist of the Republic of Armenia Artashes Hovsepyan (1931-2017), representing the heroic character Sasuntsi Davit from the eponymous folk epic.

The bas-reliefs with the figure of the hero are in the lobby of the "Sasuntsi David" station of the Yerevan Metro (tufa, 1981) and in the Cafesjian Center for the Arts.

**Key words-** Artashes Hovsepyan, sculptor, folk epic, Sasuntsi Davit, bas-reliefs, Station, Cafesjian.